




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

282

44

4736

ԹՈՒՂԹ

ՄՐԲԱԶԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ԼԵԻՈՆԻ ԺԳ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

ԱՌ. ԿԱՐԴԻՆԱԼՆ

ՄԱՐԻԱՆՕ ԲԱՄԲՕԼԼԱ

ԻՒՐ ՏԵՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱԴՊԻՐ

282

L-44

10

ԹՈՒՂԹ

ՄՐԲԱԶԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ԼԵՒՈՆԻ ԺԳ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

ԱՌ ԿԱՐԴԻՆԱԼՆ

ՄԱՐԻԱՆՕ ԲԱՄԲՕԼԼԱ

ԻՒՐ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱԳՊԻՐ

Տէր Կարդինալ

Ընդհանուր եկեղեցւոյ կառավարութեան մէջ Մեզի առաջնորդող խորհուրդներն՝ թէպէտեւ բաւականապէս Ձեզ ծանօթ են, սակայն և այնպէս պատշաճ կը համարիմք զանոնք վերստին համառօտիւ բովանդակել, և լաւ ևս յայտնի ընել Ձեզ, որ նոր պաշտօնիդ պատճառաւ, որում Մեր վստահութիւնն զՁեզ կոչեց, աւելի մօտէն Ձեր գործակցութիւնը Մեզ մատուցանելու, և ըստ մտաց Մերոց Ձեր գործը արադրելու պարտաւորեալ էք:

Ի մէջ ամենածանր հոգոց, զորս Ծայրագոյն Քահանայապետութեան սոսկալի բեռնն Մեզի միշտ պատճառած է և կը պատճառէ, ոչ սակաւ զՄեզ մխիթարած է Մեր ոգւոյն մէջ արմատացեալ խորին համոզումն, զոր ունիմք այն մեծ զօրութեան վրայօք, որով եկեղեցին ճոխացեալ է, ոչ միայն հոգւոց յաւիտենական փրկութեան, որ անոր ճշմարիտ և յատուկ վախճանն է, այլ և բոլոր մարդկային ընկերութեան փրկութեան համար:

Եւ ի սկզբանէ անտի մտքերնիս դրած էինք յեղափոխութեան և անհաւատութեան՝ եկեղեցւոյ հասուցած փառ-

78525-ակ

1803-87



ները դարմանելու հանապազ աշխատիլ, և մի և նոյն ատեն բոլոր մարդկային ընկերութեան զգացունել այս Աստուածային զօրութեան մեծ խրախոյսը, որում մեծապէս կարօտ է նա:—Եւ որովհետեւ թշնամիներն երկար ժամանակէ 'ի վեր ամեն հնարքով եկեղեցւոյ ձեռքէն ամեն ընկերական ազդեցութիւն կորզել, և անկէ ժողովուրդները և Տէրութիւնները հեռացնել կը ջանան, որոնց զայն կասկածելի ցուցնել և թշնամի կարծեցնելու համար ամեն հնարքներն 'ի գործ դրուեցան, Մեք ևս Մեր կողմանէ, ինչպէս որ ճշմարտիւ է, զայն միշտ իշխանաց և ժողովրդոց իբրեւ լաւագոյն բարեկամ և բարերար ցուցուցինք, և Սուրբ Աթոռոյ և զանազան ազգաց մէջ առաւել ևս բարեկամական յարաբերութիւններ վերանորոգելով կամ պնդելով, և ամեն տեղ կրօնական խաղաղութիւն հաստատելով՝ զանոնք իրեն հետ հաշտեցնել ջանացինք:

Ամեն բան, Տէր Կարգինալ, զՄեզ կը յորդորէ սոյն ճամբուն վրայ հաստատապէս կենալ, և անոր պատճառները հոս մանրամասն յիշատակելու հարկ չկայ: Մի միայն ցոյց կուտամք այդ ամենածանր հարկը, զոր ընկերութիւնն ունի այդպէս անխոհմարար լքած թողած կարգի և կանոնի ճշմարիտ սկզբանց վերադառնալու: Այս լքման պատճառաւ է որ, ժողովրդոց և թագաւորաց և այլ և այլ ընկերական կարգաց մէջ աւրուեցաւ այն խաղաղ ներդաշնակութիւնն, յորում անդորրութիւնն և ընդհանուր բարին կայացեալ է, կրօնական զգացումն և պարտուց սանձն տկարացաւ, ասոր համար ուժով գլուխ վերցուց և համատարած սիրեցաւ անկախութեան և ապստամբութեան հողին, որ մինչեւ անիշխանութեան և նոյն իսկ ընկերական համակեցութեան ջնջման կ'երթայ:—Չարն յանշափա կը մեծնայ, և ծանրապէս մտածել կուտայ պետական մարդոց, որոնք ընկերութիւնը մահաբեր զաւիժայրին վրայ կեցնելու և զայն փրկութեան վերակոչելու համար ամեն կերպով կը ճգնին: Եւ պետք է որ այդպէս ըլլայ, վասն զի այդպիսի կործանիչ հեղեղի մը ամեն ուժերով հարկ է թումք դնել:—Բայց փրկութիւնն չկրնար գալ առանց եկեղեցւոյ, առանց անոր փրկարար

ազդեցութեան, որ մտքերը ապահովաբար ճշմարտութեան ուղղել, և հոգիները առաքինութեան և զոհողութեան կերպաւորել գիտէ, ո՛չ օրինաց խստութիւնն, ո՛չ մարդկային արդարութեան սաստկութիւնն, և ո՛չ զինեալ ոյժն պիտի կարողանան ներկայ վտանգին առջեւ առնուլ, թող թէ ընկերութիւնը իւր բնական և անշարժ հիմանց վրայ վերահաստատել:

Այս ճշմարտութեան վրայ համոզեալ, Մեր պաշտօնը կը համարիմք այս փրկութեան գործը շարունակել, թէ՛ Աւետարանի սուրբ վարդապետութիւնները տարածելով, թէ՛ ամենուն սիրտը եկեղեցւոյ և Քահանայապետութեան հետ վերստին բարեկամացնելով, և թէ՛ միոյն և միւսոյն առաւել մեծ ազատութիւն հայթայթելով, այնպէս որ իրենց բարերար պաշտօնը աշխարհիս մէջ աւելի առատ արդեամբ կատարելու վիճակի մէջ գտնուին:

Տէր Կարգինալ, Չեր՝ գործոց մէջ ունեցած փորձառութենէն, ժրութենէ, և առ Սուրբ Աթոռն ցուցուցած հաւատարիմ սիրոյն, և առ Մեր անձն յարումէն մեծայոյս ըլլալով, Մեզի հաճոյ եղաւ զՉեզ այս գործոյս ընկերակից ընել: Այդ ամենազինու վախճանը ձեռք բերելու համար, Դուք Մեր հետ ամեն տեղ Սուրբ Աթոռոյն գործը վարելու պիտի ջանաք, բայց զանոնք այլ և այլ ազգաց յարմարելով, իւրաքանչիւրին պիտոյից և յատուկ պայմանաց համեմատ:

Աւստրիոյ-Հունգարիոյ Օգոստափառ Կայսեր և Առաքելական Թագաւորին հռչակաւոր աստուածապաշտութիւնն, և առ Սուրբ Աթոռն ջերմեռանդութիւնն, յորում իրեն հետ կայսերական և թագաւորական ընտանեաց միւս անդամներն ևս միաբան են, Սուրբ Աթոռոյ և նոյն կայսերութեան մէջ ամենալաւ յարաբերութեանց գոյանալուն պատճառ է: Այս բարի յարաբերութեանց և Օգոստափառ Վեհապետին վստահութիւնը վայելող մարդկանց զգոնութեան շնորհիւ՝ հնար պիտի ըլլայ յԱւստրիա-Հունգարիա կրօնական շահերը յառաջ տանիլ, անոր արդելքները վերցնել, և կատարեալ միաբանութեամբ հարթել այն դժուարութիւնները, որք կրնան դէմ ելլել:

Ապա Մեր միտքն առանձին խնամքով դէպ 'ի Գաղղիա կը դառնայ, ազգ. ազնուական և մեծահոգի, Կաթողիկէ դործերով և հաստատութիւններով արդատաւոր, և միշտ սիրելի Քաջանայապետաց, որոնք զայն եկեղեցւոյ իբրեւ առջինն կ'ընկալանք նկատած են: Մեր փորձով գիտեմք անոր որդւոց առ Առաքելական Աթոռն տածած ջերմեռանդութիւնը, յորոց շատ անգամ մեծ մխիթարութեան պատճառներ ունեցած ենք: Սոյն այս առանձին սիրոյ զգացումն, զոր ունիմք իրեն նկատմամբ, Մեզի ամենամեծ ցաւ կը պատճառէ այն ամեն բաներուն համար, զորս կը տեսնեմք որ հոն 'ի փնտս կրօնից և եկեղեցւոյ կը հանդիպին: Եւ ու խտիւր կը խնդրեմք որ չարն դադրէ, և անվատահոթութիւններն ևս դադարեցնուի, 'ի պահպանութեան, ըստ գրոյն և ըստ ողւոյն, հանդիսիւ եղեալ գաշանց, Սուրբ Աթոռոյ և Գաղղիոյ մէջ փափաքեալ միաբանութիւնն կարենայ միշտ տիրել:

Ոչ սակաւ կը դրաւ Մեր սիրտը նաև Սպանիա, որ իւր հաստատուն հաւատքովն Կաթողիկէ ազգի փառաւոր անուան արժանացաւ, և իւր ճոխութեան մեծ մասը 'ի կրօնից ստացած է: Տէր Կարդինալ, Գուր 'ի մօտոյ անոր արժանիքը և առանձին պէտքերը ևս ճանչցաք, որոնց ամենուն առաջինն՝ կրօնից ազնուասիրտ և անշահասէր պաշտպանութեան մէջ ուղղափառաց միութիւնն, առ Սուրբ Աթոռն անկեղծ յարումն, և փոխադարձ սէրն է, որով անձնական վախճաններէ և հակառակութեան հոգիէն զերծ կը մնան: Այդ հաւատարիմ և մեծասիրտ ազգին Մեզի հետ ունեցած սերտ յարաբերութիւններն, այրի խնամակալու հի թագաւորոց բարեպաշտութիւնն և առ Քրիստոսի Փոխանորդն որդիական մեծարանքն զՄեզ կ'ապահովեն թէ, Մեր Հայրական խնամքն զոր ունիմք ուղղափառութեան շահուց և այդ թագաւորութեան յաջորդութեան համար, մեծապէս օգնութիւն և նպաստ պիտի գտնեն:

Ծագման, լեզուի և կրօնից սերտ մերձաւորութիւններն, որպէս նաև 'ի Հայրենի հաւատս նոյն օրինակ հաստատութիւնն, որք Սպանիոյ ժողովրդեան՝ Հարաւային Ամերիկոյ ժողովուրդները կը միացնեն, զՄեզ կը հրաւիրեն զանոնք

չի զրկել յառանձին խնամաց, զորս հաւատարապէս պիտի տարածեմք իրենց ընդհանուր օգտին:

Չեմք կրնար լռել Բորթուգալի ժողովրդեան վրայ, որ հեռաւոր երկիրներու մէջ Կաթողիկէ կրօնին ծաւալման այնչափ օգնեց, և որ մէկ կողմանէ յարգալից մեծարանաց՝ և միւս կողմանէ հայրական համապատասխանութեան փոխադարձ զօդերով Սուրբ Աթոռոյն սերտագոյնս միացած է: Որոյ հետ վերջին ժամանակներս Արեւելեան Հնդկաստանի Տիրական իրաւանց ծանր խնդիրը կրցանք ընդհանուր միաբանութեամբ և փոխադարձ հաճութեամբ յարդարել: Կը յուսամք որ նաև յապագային պիտի գտնեմք յանձին անոր, որ նոյն երկիրը կը կառավարէ, նոյն նպատաւոր տրամադրութիւնները, որպէս զի կարող ըլլանք, ինչպէս նոյն թագաւորութեան, այսպէս նաև իւր գաղթականութեանց երկիրներուն մէջ ուղղափառ կրօնին ևս քան զէս աճումն տալ:

Այս ուղղափառ ազգաց կը յարեմք նաև Բելգիան, ուր կրօնական զգացումն միշտ այդպէս կենդանի և գործունեայ է, և ուր այն առանձին սիրոյն համար, զոր երկար ժամանակէ 'ի վեր ունիմք իրեն նկատմամբ, կ'ուզեմք որ եկեղեցւոյ բարերար գործն թէ՛ հրապարակական և թէ՛ առանձնական կենաց մէջ միշտ առաւել ևս սփռեալ տարածուի:

Իսկ 'ի Բրուսիա, հարկ է կրօնական հաշտութեան գործը շարունակել, մինչեւ որ 'ի կատար հասնի:—Մինչեւ ցայժմ 'ի ձեռս բերուածն, որ քիչ չէ, նորին Վեհափառութեան Կայսեր բարի տրամադրութիւնն, և անոնց, որոնց ձեռքն է այն երկրին վերին Վարչութիւնն, բարի կամքն, որով միշտ ոգեւորեալ կը տեսնեմք, զՄեզ կը յուսացնեն, թէ Մեր խնամքն, զոր ունիմք առաւել ևս բարւոքելու Կաթողիկէ եկեղեցւոյ վիճակը այն թագաւորութեան մէջ, անօգուտ պիտի չըլլան. և այսպէս պիտի կարենամք գոհացնել այն ուղղափառ ժողովրդոց արդար իղձերը, որոնք իրենց հաստատութեամբ և յարատեւութեամբն կրօնից նկատմամբ այնչափ բարեացադարտը են:

Գերմանիոյ այլ վիճակաց ևս նոյն հոգն ու խնամքը տարածելու մտադիր ենք, որպէս զի բոլորովին վերցուին կամ

փոխութիւն այն օրէնքներն, որոնք Եկեղեցւոյ թոյլ չեն տար իւր հոգեւոր իշխանութեան կարեւոր ազատութիւնը գործադրել։ Աստուած տայ որ, ամենքն ալ այս ճանապարհին հետեւիլ ուզենան։ Բայց առանձին փափաք մը ունիմք Պապիէրայի ուղղափառ թագաւորութեան նկատմամբ, որոյ հետ Սուրբ Աթոռն յատուկ կապեր ունի, և ուր կը փափաքիմք որ հաւատքն միշտ առաւել յաջող և արդատաւոր կեանք մը ունենայ։

Ուրախ կ'ըլլայինք, եթէ այլ չկաթողիկեայ Տէրութեանց երկիրներուն մէջ ևս կարենայինք Եկեղեցւոյ բարի և փրկարար ազդեցութիւնները մուծանել, և կարգի, անդորրութեան և հրապարակական բարեկեցութեան խնդրոյն՝ Մեր օգնութիւնը ընձեռել, մանաւանդ հոն, ուր, ինչպէս Անգղիոյ ընդարձակ գաղթականութեանց մէջ կը հանդիպին, բազմաթիւ ուղղափառ հպատակք կը գտնուին, որոնց 'ի պաշտօնէ ծայրագոյն Առաքելութեան ամեն խնամքը մատուցանելու պարտաւոր եմք, կամ ուր, ինչպէս Ռուսիոյ երկիրներուն մէջ, դժուար պայմաններն, յորում Եկեղեցին և ուղղափառ հպատակներն կը գտնուին, մեր խնամքները աւելի ևս հարկաւոր և պատշաճ կ'ընծայեն։—Եւ քանզի այն իշխանութիւնն՝ որով ճոխացեալ եմք, 'ի բնէ իւրմէ ամեն ժամանակ և տեղ կ'ընդգրկէ, Մեր պարտքն է կրօնից զարգացման հոգ տանիլ, ուր այն արդէն ընդարձակագոյնս հաստատեալ է, ինչպէս Ամերիկոյ շատ երկիրներուն մէջ, նրպաստել առաքելութեանց՝ տակաւին բարբարոս երկիրներու մէջ։—Նոյնպէս Մեր խնամոց կը պատկանի 'ի միութիւն կոչել այն ժողովուրդները, որոնք անկէ թշուառութեամբ բաժանեալ են։ Ասոնց մէջ կը յիշատակեմք Արեւելից ժողովուրդները, ժամանակ մը այնչափ արդիւնաւորք 'ի գործս հաւատոյ, և այնչափ փառաւորեալք։ Եւ ամեն ազգէ առաջ Յունաստանի ժողովուրդները, զորոնք Մեք, ըստ օրինակի Մեր նախորդաց շատերուն, բոլորով սրտիւ կը փափաքիմք տեսնել որ Կաթողիկէ միութեան կեդրոնին վերադառնան, և նախկին պայծառութեան հասնին։

Բայց կայ ուրիշ կէտ մը, որ հանապաղ Մեր ուշադրու-

թիւնը իրեն կը գրաւէ, և Մեզ և Մեր Առաքելական իշխանութեան համար ամենածանր կարեւորութիւն մը ունի։ Կ'ուզեմք ըսել Մեր 'ի Հռովմ ներկայ վիճակին վրայ, այս է, պաշտօնապէս կազմեալ Իտալիոյ և Հռովմէական Քահանայապետութեան մէջ գտնուող դժնդակ անհամաձայնութեան պատճառաւ։ Այս ծանր խնդրոյս վրայ կ'ուզեմք Մեր միտքը կատարելապէս յայտնել Ձեզ։

Շատ անգամ Մեր փափաքը յայտնեցինք թէ՛ կ'ուզէինք վերջապէս տեսնել այս երկպառակութեան վերջը, և վերջերս իսկ անցեալ Մայիսի 23 Ատենական Բանաստեղծութեան մէջ յայտնեցինք թէ, Մեր սիրտն տրամադրեալ էր հաշտութեան գործը տարածելու, ինչպէս ուրիշ ազգաց, այսպէս 'ի մանաւորի Իտալիոյ, որ այնչափ տխուրներով Մեզ սիրելի և սերտագոյնս միացեալ է։—Այլ միաբանութիւնը հաստատել կարենալու համար հոս, ինչպէս այլուր, չբաւեր մանաւոր կրօնական շահու մը խնամ տանիլ, բարեփոխել կամ բառնալ հակառակ օրէնքները, վերահաս հակառակ տրամադրութեանց առջեւ առնուլ, այլ հարկ է ևս, և գլխաւորաբար, որ ինչպէս պարտ և պատշաճ է, Եկեղեցւոյ ծայրագոյն Գլխոյն վիճակն կարգաւորի, որ շատ տարիներէ 'ի վեր 'ի գործ դրուած բռնութեանց և թշնամանաց պատճառաւ՝ իրեն ամենեւին անարժան և Առաքելական պաշտաման ազատութեան հետ ամենեւին անհաշտելի է։—Ասոր համար Մեր վերոյիշեալ Բանաստեղծութեան մէջ՝ արդարութիւնը և Առաքելական Աթոռոյ արժանապատուութիւնը այս հաշտութեան հիմ գնել, և Մեզի համար իրաց այնպիսի վիճակ մը պահանջել ջանացինք, յորում Հռովմայ Քահանայապետն ոչ ումեք ենթարկուի, և կարենայ լիովին և ոչ խաբեղատիր ազատութիւն մը վայելել։—Մեր խօսքերը այլազգ իմանալու, թող թէ զանոնք Մեր մտաց բոլորովին հակառակ իմաստի մը թիւրբեւով՝ փոփոխելու տեղի չկար։ Ասոնցմէ յայտնի կ'իմացուէր Մեր մտաց խորհուրդն, այսինքն թէ, յիտալիա վերահաշտութիւնը հաստատելու համար՝ Հռովմայ Քահանայապետին ճշմարիտ թագաւորութիւն մը տալ անհրաժեշտ հարկ էր։ Քանզի ի-

րաց ներկայ վիճակին մէջ յայտնի է թէ, Մեք ոչ թէ Մեր, այլ առաւել այլոյ իշխանութեան ներքեւ եմք, որոյ կամքէն կախումն ունի, մարդկանց և պարագայից փոփոխութեան համեմատ, երբ և ինչպէս հաճի, նոյն իսկ Մեր գոյութեան պայմանները այլափոխել: Արդարեւ առաւել յայտնի է թէ Մերում իշխանութեան եմք, ինչպէս շատ անգամ կըրկնած եմք: Եւ ասոր համար միշտ Մեր Քահանայապետութեան ժամանակ, ինչպէս Մեր պարտքն էր, Հռովմայ Քահանայապետին համար իսկական թագաւորութիւն մը պահանջեցինք, և զայս ոչ փառասիրութեան և ոչ երկրաւոր մեծութեան նպատակաւ, այլ իւր անկախութեան և ազատութեան իրեն ճշմարիտ և ազդու ապաւէն:

Արդարեւ ծայրագոյն Քահանայապետութեան իշխանութիւնն, որ ՚ի Յիսուսէ Քրիստոսէ հաստատուած, և Սուրբ Պետրոս Առաքելոյն՝ և անոր միջոցաւ Հռովմայ Քահանայապետաց՝ անոր օրինաւոր Յայրողաց տրուած է, որ Որդւոյն Աստուծոյ աշխարհիս վրայ նորոգիչ առաքելութիւնը մինչեւ ՚ի վախճան ժամանակաց շարունակելու սահմանեալ է, որ ազնուագոյն առաւելութեամբ ճոխացեալ, բարձրագոյն և իրեն յատուկ և օրինական իշխանութեամբ օժտեալ, որք ճշմարիտ և կատարեալ ընկերութեան մը կառավարութեան համար կը պահանջուին, ՚ի բնէ իւրմէ և իւր աստուածային Հիմնադրին յայտնի կամքէն և ոչ մի երկրաւոր իշխանութեան կրնայ հպատակիլ. մանաւանդ թէ իւր բարձր պաշտամանց գործադրութեան մէջ՝ պէտք է որ լիովն ազատութիւն վայելէ:—Եւ որովհետեւ ընդհանուր Եկեղեցւոյ օգուտն այս ծայրագոյն իշխանութենէ, և անոր ազատ գործադրութենէ կախումն ունի, ամենածանր կարեւորութիւն ունէր, որ իւր բնական ազատութիւնն և անկախութիւնն յանձին անոր, որ անով ճոխացեալ է, դարուց շրջանին մէջ այն միջոցներով ապահովուէր, երաշխաւորուէր և պաշտպանուէր, զոր Աստուածային Նախախնամութիւնն այս վախճանիս պատշաճ և կարեւոր դատէր:

Եւ այսպէս Եկեղեցին իրեն ՚ի յայտնի կնիք իւր աստուածայնութեան, առաջին դարուց երկարատեւ և դժնդակ

հալածանքներէն յաղթական ելլելով, և անցած ըլլալով այն հասակն, որ մանկութիւն կրնայ ըսուիլ, և իւր կենաց լիովն կատարելութեան մէջ երեւելու ժամանակն՝ իրեն համար հասած ըլլալով, Հռովմայ Քահանայապետաց համար իրաց յատուկ վիճակ մը սկսաւ, որ Նախախնամական պարագայից կցորդութեամբն, փոքր առ փոքր, իրենց քաղաքային իշխանութեան հաստատութեամբն յանդեցաւ: Որ իշխանութիւնն այլ և այլ ձեւով և տարածութեամբ դարուց երկար ընթացից անհամար արկածից մէջ ևս մինչեւ Մեր օրերս տեսց, Իտալիոյ և բոլոր Եւրոպիոյ նաև աշխարհափարական և քաղաքական կարգին մէջ ամենամեծ օգուտներ հայթայթելով:—Բարբարոսաց վանումն, կամ քաղաքակրթութիւնն, բռնաւորութեան դէմ դնելն և զանի զսպելն, գրոց, արուեստից, գիտութեանց տրուած մղումն, քաղաքաց ազատութիւններն, Քահանայապետաց և իրենց իշխանութեան փառքն են: Այսպէս ինքնին և օրինաւոր կերպով ծագումն առած հաստատութիւն մը, որ երկոտասան դարուց խաղաղ և անընդդիմակաց ստացումը ՚ի նպատակ իւր ունի, որ կրօնից և քաղաքակրթութեան ծաւալման մեծապէս նպաստեց, որ ժողովրդոց նկատմամբ երախտագիտութեան այնչափ տիտղոսներ ստացաւ, ամենէն աւելի յարգուելու և պահպանուելու իրաւունքը ունի: Եւ բռնութեանց և անիրաւութեանց շար մը զինքը ընկճելու կարողացած ըլլալուն համար՝ չկրնար ըսուիլ որ Նախախնամութեան խորհուրդներն իրեն նկատմամբ փոխուած ըլլան: Նա մանաւանդ եթէ նկատուի որ, Քահանայապետաց քաղաքական իշխանութեան դէմ մղուած պատերազմն՝ միշտ Եկեղեցւոյ թրշնամեաց, և այս վերջին ժամանակներս ազանդոց գլխաւոր գործն եղած է, որոնք, ժամանակաւոր իշխանութիւնը տապալելով, մտադիր էին որ Քահանայապետաց եկեղեցական իշխանութեան վրայ յարձակելու ճամբան ևս իրենց առջեւ բացուէր, այս ամենն կ'ըսեմք, յայտնապէս կը հաստատէ թէ, Քահանայապետաց քաղաքական իշխանութիւնն այսօրուան օրս ևս ՚ի խորհուրդս Նախախնամութեան կարգեալ է, իբրեւ միջոց իրենց Առաքելական իշխանութեան կանոն-

նաւոր զործադրութեան, այնու զի անոր ազատութիւնը և անկախութիւնը ազդու եղանակաւ կը պահպանէ:

Ինչ որ ընդհանրապէս Քահանայապետաց քաղաքական իշխանութեան վրայ կ'ըսուի, նոյնն առաւել ևս ի մասնաւորի կը գորէ Հռովմայ նկատմամբ:

Անոր ճակատագիրն՝ բոլոր իր պատմութեան մէջ յայտնապէս կը կարդացուի, այսինքն թէ, ինչպէս ի խորհուրդս Աստուածային նախահրամանութեան ամեն մարդկային զէպքերն Քրիստոսի և Եկեղեցւոյ ուղղութեան, այսպէս հինն Հռովմ և իւր կայսերութիւնն՝ քրիստոնեայ Հռովմայ համար հաստատեցան. և Առաքելոց իշխան Սուրբն Պետրոս՝ անոր հովիւն ըլլալու և ծայրագոյն Առաքելութեան իշխանութիւնը ցյաւառեանս անոր թողլու համար, ոչ առանց մասնաւոր տրամադրութեան, իւր քայլերը հետեւեալ աշխարհին մայրաքաղաքին դարձուց: Այդպէս Հռովմայ բախտն նուիրական և անխղիւղ կերպով մը Յիսուսի Քրիստոսի փոխանորդին բախտին հետ կապուած է. և երբ, երջանիկ ժամանակաց արշալոյսն ծագելով, Մեծն Կոստանդիանոս հռովմէական կայսերութեան ակնաբեր յԱրեւելոյ փոխադրելու ժամանակ, կրնամք իբրեւ ստոյգ համարել թէ, նախահրամանութեան ձեռքն անոր առաջնորդած ըլլայ, որպէս զի Քահանայապետաց Հռովմայ վրայ նոր ճակատագիրներն կատարուին: Ստոյգ է որ այն ժամանակէն յետոյ, ժամանակաց և պարագայից նպաստին, ինքնին՝ և առանց ոյր և իցէ թշնամութեան և հակառակութեան, Քահանայապետներն ամենաօրինաւոր կերպով նաեւ քաղաքականապէս անոր տէրն եղան, և իբրեւ այնպէս՝ զայն մինչեւ մեր օրերս պահեցին: — Քահանայապետաց՝ իրենց այս սիրելի քաղաքին հայթայթած անհուն բարերարութիւնները և փառքը հոս յիշատակելու հարկ չկայ: Փառք և բարերարութիւնք, որոնք ամենայն դարուց յիշատակարանաց և պատմութեան մէջ անջինջ տառերով արձանագրուած են: Աւելորդ է ևս ակնարկել թէ այս Հռովմ իւր ամեն կողմ խորապէս քանդակեալ կը կրէ Քահանայապետաց դրոշմը, և թէ ինքն այնպիսի և այնչափ տիրութենէրով Քահանայապետաց կը պատ-

կանի, զորս և ոչ իշխան մը իւր տիրութեան մէկ քաղաքին վրայ կըցաւ երբէք ունենալ: — Այլ մեծապէս անկէ դիտել թէ, ի գործադրութեան առաքելական պաշտաման, Քահանայապետական անկախութեան և ազատութեան պատճառն առաւել մեծ և բոլորովին յատուկ զօրութիւն մը կ'առնու երբ Հռովմայ վրայ խօսք ըլլայ, որ ծայրագոյն Քահանայապետաց բնական Աթոռն, Եկեղեցւոյ կենաց կեդրոնն, և Կաթողիկէ աշխարհի մայրաքաղաքն է: Հոս, ուր Քահանայապետն հասարակօրէն կը բնակի, կ'ուղղէ, կ'ուսուցանէ և կը հրամայէ, որպէս զի բոլոր աշխարհի հաւատացեալներն կարենան ամենայն վստահութեամբ և ապահովութեամբ իրեն յարգութիւն, հաւատարմութիւն և հրեշտակութիւն ընծայել, զոր ի խղճէ մտաց Անոր կը պարտին, հոս, մանաւանդ, հարկ է որ ինքն այնպիսի անկախութեան վիճակի մէջ գտնուի, յորում իւր ազատութիւնն ոչ միայն պէտք է որ մէկէ մը և ոչ փոքր կերպով խափանուի, այլ և ամենուր յայտնի ըլլայ թէ խափանեալ չէ. և այս ոչ թէ անցողական և որ և իցէ դիպուածի մէջ փոփոխական, այլ ի բնէ իւրմէ կայուն և տեւական եղանակաւ: Ուղղափառ կենաց լիովին ցոյցերն, պաշտաման փառաւորութիւնն, Եկեղեցւոյ օրինաց յարգութիւնն և հրապարակական պահպանութիւնն, ամեն ուղղափառ հաստատութեանց խաղաղ և օրինաւոր գոյութիւնն առանց երկիւղի խափանման՝ պէտք է որ ամեն տեղէ աւելի հոս հնար ըլլայ:

Այս ամենէն դիւրաւ կրնայ իմացուիլ թէ, ինչպէս պարտական են Հռովմայ Քահանայապետք, և իրենց համար որչափ նուիրական է քաղաքական իշխանութիւնը և անոր պատճառները պաշտպանելու և պահելու պարտքն, որ և իրենց տուած երդման պատճառաւ ևս աւելի նուիրական եղած է: Յիմարութիւն կ'ըլլար ենթադրել թէ՝ նոյն իսկ իրենք, քաղաքական իշխանութեան հետ, իրենց ամենէն սիրելի և յարգելի եղող բանը ևս զոհելու հաւանին. կ'ուզեմք ըսել Եկեղեցւոյ կառավարութեան մէջ իրենց ունեցած ազատութիւնը, որոյ համար իրենց նախորդքն ամեն առթի մէջ այդպէս փառօք պաշտպան հանդիսացան:

Մեր ստուգիւ, Աստուծոյ օգնականութեամբ, Մեր պարտքէն չպիտի վրիպիմք, և ճշմարիտ և իսկական իշխանութեան մը վերադարձէ դուրս, զոր Մեր անկախութիւնն և Առաքելական Գահուն պատիւն կը պահանջէ, միաբանութիւն և խաղաղութիւնը վերահաստատելու համար՝ բացուած ուրիշ մուտք մը չեմք տեսներ։—Նոյն իսկ համօրէն ընդհանուր ուղղափառութիւնն, որ իւր Գլխոյն ազատութեան համար մեծապէս նախանձախնդիր է, մինչեւ որ Անոր արդար պահանջանաց իրաւունք տրուիլը չտեսնայ, երբէք չպիտի հանդարտի։

Գիտեմք որ քաղաքագէտ մարդիկներ՝ իրաց յայտնութենէն ճանչնալու ստիպուած ըլլալով թէ, ներկայ պայմանն այնպէս չէ, ինչպէս Հռովմէական Քահանայապետութեան կը վայելէ, զայն բարւոքելու համար ուրիշ հնարքներ և հայթայթանքներ կը մտածեն։ Բայց ասոնք ընդունայն և անօգուտ փորձեր են, և ամեն այդպիսիներն ևս այնպէս պիտի մնան, որոնք գեղեցիկ երեւոյթներու տակ, գործով, Քահանայապետը ճշմարիտ և իսկական հպատակութեան ներքեւ կը թողուն։ Թերութիւնն՝ նոյն իսկ ներկայիս հաստատեալ իրաց բնութեան մէջ կը կայանայ, և ի գործ դրուելիք և ոչ մի արտաքին մեղմացում կամ զգուշութիւն կարող է զայն բառնալ։—Մինչ կամ յեղափոխական տարրներու և այնպիսի մարդկանց յաղթանակելուն պատճառաւ, որոնք Քրիստոսի Փոխանորդին անձին և իշխանութեան դէմ իրենց ունեցած դիտաւորութիւնները չեն ծածկեր, կամ պատերազմական արկածից, և բազմաթիւ չփոթութեանց պատճառաւ, որք ի վնաս իւր կրնան այդ պատերազմներէն ծագիլ, դիւրաւ կրնան այդպիսի դիպուածներ հանդիպիլ, յորս Քահանայապետին վիճակն առաւել ևս վատթարանայ։—Միակ միջոցն, զոր Նախախնամութիւնն, ինչպէս անկ էր, Քահանայապետաց ազատութիւնը պահպանելու համար մինչեւ ցայժմ գործածեց, անոնց ժամանակաւոր իշխանութիւնն եղաւ. և երբ այս միջոցն պակսեցաւ, Քահանայապետք միշտ կամ հալածուեցան, կամ բանտարկուեցան, կամ արքայութեան, կամ

արդարեւ հպատակութեան վիճակի և այս ճամբաներէն միոյն կամ միւսոյն վրայ մղուելու յարատեւ վտանգին մէջ գտնուեցան։—Բոլոր Եկեղեցւոյ պատմութիւնն ասոր կը վկայէ։

Կը յուսացուի նաեւ, և ժամանակին վրայ կը վստահուի, իբրեւ թէ, ներկայ վիճակս ընդերկար տեւելով, կարենայ վերջապէս ընդունելի ըլլալ։—Բայց Քահանայապետաց, ինչպէս նաեւ ընդհանուր ուղղափառութեան համար, իրենց ազատութեան խնդիրն առաջին և կենսական չափ մը ունի. և ասոր համար պէտք է ապահով ըլլալ թէ, իրենք միշտ պիտի պահանջեն որ այն ապահովագոյն եղանակաւ երաշխաւորեալ ըլլայ։ Անոնք որ այլազգ կը խորհին, չեն ճանչնար, կամ չճանչնալ կը կեղծեն թէ Եկեղեցւոյ բնութիւնն ի՞նչ է, թէ ո՞րպիսի և ո՞րքան է իւր կրօնական, բարոյական և ընկերական զօրութիւնն, զոր ո՛չ ժամանակին արկածներն, և ո՛չ մարդկանց բռնութիւններն պիտի կարենան երբէք տկարացնել։ Եթէ զայս խմանային, և ստուգիւ քաղաքագիտական հանճար ունենային, մի միայն զներկայն չպիտի խորհէին, և ոչ ապագային համար խաբեբայ յոյսերու վրայ պիտի վստահէին, այլ նոյն իսկ իրենք Հռովմայ Քահանայապետին տալով զայն, զոր Նա արդար իրաւամբ կը պահանջէ, անստուգութեամբք և վտանգներով լի իրաց վիճակը պիտի բառնային, և այս կերպով նոյն իսկ Իտալիոյ մեծ շահերը և բախտը պիտի ապահովէին։

Ձեմք կրնար յուսալ թէ, այն մարդիկներն, որ Եկեղեցւոյ և Քահանայապետութեան դէմ ատելութեան մէջ մեծցած են, լսեն այս մեր խօսքը. ասոնք, ճշմարիտը ըսելու համար, ինչպէս կրօնքը կ'ատեն, այսպէս իրենց հայրենեաց ճշմարիտ բարին չեն ուզեր։ Բայց անոնք, որ հնացեալ նախապաշարմամբք տողորեալ, և անկրօնութեան շնչով ողորեալ չըլլալով, պատմութեան և իտալական աւանդութեանց ուսումը ճշդիւ կը գնահատեն, և Եկեղեցւոյ օէրը հայրենեաց սիրոյն չեն զատեր, ասոնք պէտք է որ Մեզի հետ ճանչնան թէ, Իտալիոյ համար՝ իրեն զարգացման և մեծութեան ամենէն արդատաւոր սկզբունքն՝ նոյն իսկ Քա-

Հանայապետութեան հետ ունենալիք միաբանութեան վրայ կայացած է :

Որոյ ապացոյցն է իրաց ներկայ վիճակն :—Արդ տարակոյս չկայ , և նոյն իսկ իտալացի քաղաքագէտ մարդիկներն ևս կը խոստովանին թէ , Սուրբ Աթոռոյ հետ եղած անհամաձայնութիւնն՝ ներքին և արտաքին ոչ այնչափ փոքր և ոչ այնչափ թեթեւ դժուարութիւններ ծնանելով , իտալիոյ ոչ թէ օգտակար , այլ և վնասակար է : Ի ներքս ուղղափառաց տեղոհութիւն , տեսնելով որ Յիսուսի Քրիստոսի Փոխանորդին իրաւունքներն առ ոչինչ կը համարուին և կ'անարդուին : —Խղճերու չփոթութիւն :—Անկրօնութեան և անբարոյակա-նութեան աճումն , որոնք հասարակաց բարւոյն մեծապէս վնասակար տարրեր են :—Յարտաքս , ուղղափառաց դժկամակութիւնն , որոնք Քահանայապետին ազատութեան հետ՝ քրիստոնէութեան ամենակենսական շահերը ևս վտանգեալ կը տեսնեն :—Դժուարութիւնք և վտանգք , որոնք , նաև 'ի քաղաքագիտական կարգի , կրնան իտալիոյ համար աստիճաղիլ , յորոց բոլորով սրտիւ կը փափաքիմք որ Մեր հայրենիքն զերծ մնայ :—Նա որ կարող և պարտական է , թող այդ անհամաձայնութիւնը դադրեցնէ , տալով Քահանայապետին այն դիրքը , որ իրեն կը պատկանի , և այդ ամեն դժուարութիւններն նոյն հետայն պիտի դադրին : Մանաւանդ թէ իտալիան աստիճապէս պիտի օգտուի յայնմ ամենայնի , որ ժողովրդեան մը ճշմարիտ փառքը և երջանկութիւնը կը կազմէ , կամ որ քաղաքակրթութեան անուան արժանի է : Վասն զի ինչպէս որ Քահանայապետութեան ամենամօտ ազգն ըլլալու բախտը ունեցաւ 'ի Նախախնամութենէ , այսպէս , եթէ անոր հետ չմարտնչի և անոր չհակառակի , անոր բարերար ազդեցութիւնները առաւելագոյն առատութեամբ ընդունելու սահմանեալ է :

Սովորաբար կ'առարկուի թէ , Քահանայապետական իշխանութիւնը վերահաստատելու համար՝ հարկ կ'ըլլայ ստացուած մեծ օգուտներէն հրաժարիլ , ժամանակիս յառաջագիմութիւնները առ սոսն կոխել , և մինչեւ ցմիջին դար յետս դառնալ : Բայց ասոնք արժէք ունեցող պատճառներ չեն :

Արդարեւ , ո՞ր ճշմարիտ և իրական բարւոյն Քահանայապետական իշխանութիւնն կը հակառակի : Տարակոյս չկայ որ , Քահանայապետաց քաղաքական իշխանութեան արդէն ենթարկեալ քաղաքներն և դաւառներն , սոյն այս պատճառիս համար , չատ անգամ օտարին իշխանութեան ներքեւ իյնալէ ազատեցան , և միշտ իտալական բարքը և սովորութիւնները անխառն պահեցին : Եւ այսօր իսկ չկրնար այլազգ ըլլալ . քանզի , եթէ Քահանայապետութիւնն իւր վսեմ , տիեզերական և մշտատեւ առաքելութեան համար ամենայն ազգաց կը պատկանի , 'ի Նախախնամութենէ հոս իրեն սահմանեալ Աթոռոյն պատճառաւ՝ իտալիոյ առանձին փառքն է :—Եւ եթէ այսու Տէրութեան միութիւնն պիտի վերնայ , Մեր առանց մոռալու այն դիտողութեանց , որք իրին ներքին արժէքին կը պատկանին , և միայն վայրկեան մը նոյն իսկ հակառակորդաց կողմն անցնելով , կը հարցնեմք թէ , արդեօք միութեան այն պայմանն կարենայ ազգաց համար այդպիսի բացարձակ բարի մը հայթայթել , որ առանց անոր՝ իրենց համար ո՛չ զարգացումն և ո՛չ մեծութիւն կարենայ ըլլալ . կամ թէ այնչափ բարձրագոյն է , որ ամեն բարիքէ յառաջ կարենայ անցնիլ : Ամենէն առաւել ծաղկեալ , զօրաւոր և փառաւորեալ ազգաց վիճակն՝ Մեր տեղ կը պատասխանէ , թէ և ասոնք հոս պահանջուած այն միութեան կերպը ոչ ունեցան , և ոչ ունին : Բնական բանն ևս կը պատասխանէ թէ , տարածայնութեան մէջ՝ պէտք է որ արդարութեան բարին , որ Տէրութեանց բարօրութեան և հաստատութեան առաջին հիմն է , քան զայլ բարիս յառաջէ . և այս մանաւանդ երբ այդ , ինչպէս այս բանիս մէջ կը պատահի , կրօնից և ընդհանուր եկեղեցւոյ ամենամեծ շահուն հետ միացած է : Որոյ առջեւ տարտամիլ հնար չէ . և եթէ աստուածային Նախախնամութեան կողմանէ առանձին սիրոյ ցոյց մ'էր իտալիոյ համար՝ Քահանայապետութեան մեծ հաստատութիւնը յիւր ծոց դնելն , որով ամեն ազգ զինքը մեծապէս պատուեալ պիտի համարէր , արդար և պարտ է որ իտալացիք զայն իրեն պատշաճ պայմանին մէջ պահելու համար՝ դէմ ելլող դժուարութիւններուն միտ

չդնեն: Մանաւանդ որ, Իտալիա, Քահանայապետութեան հետ խաղաղութեամբ ապրելով, բաց յայլ օգտակար և յարմար բարեխառն տրամադրութեանց, որք 'ի գործնականին կրնան տնօրինուիլ, և յայլ ծանրագին բարիքներէ, կրօնական միութիւնը ամրապէս պնդեալ պիտի տեսնէ, որ այլ ամենայն միութեանց հիմն, և անբաւ, նաեւ ընկերական շահուց աղբիւր է:

Քահանայապետին քաղաքական իշխանութեան ոսոխներն, քաղաքակրթութիւն և յառաջագիմութիւնը ևս 'ի մէջ կը բերեն:—Այլ նոյն իսկ 'ի սկզբան անդ լաւ գիտնալու է թէ, մի միայն այն, որ մտաւորական և բարոյական կատարելութեան կը տանի, և կամ անոր չհակառակիր, մարդուս ճշմարիտ յառաջագիմութիւնը կրնայ կազմել. և այսպիսի յառաջագիմութեան համար՝ եկեղեցիէն աւելի արգասաւոր աղբիւր մը չկայ, որ զմարդ միշտ ճշմարտութեան և բարի վարուց մղելու պաշտօնը ունի: Ամեն այլօրինակ յառաջագիմութիւն, եթէ այս շրջանէն դուրս գտնուի, ստուգիլ յառաջագիմութիւն չէ, այլ յետագիմութիւն, և զմարդ նուաւ տացնելէ, և զայն գէպ 'ի բարբարոսութիւն մղելէ զատ ուրիշ բանի կարող չէ. և Քահանայապետք ո՛չ իբրեւ Պապ և ո՛չ իբրեւ քաղաքական իշխան կրնան երբէք, բարեբաղդաբար վասն մարդկութեան, այդմ թիկունք ըլլալ:—Այլ այն ամենայն, զոր գիտութիւններն, արուեստներն և մարդկային հանճարն կենաց օգտին և դիւրութեան համար գտած են կամ կրնան 'ի նորոյ գտնել, այն ամենայն, որ հասարակաց և առանձնականաց բախտին արդար շահուն և յաջողութեան կը նպաստէ, այն ամենայն, որ ոչ թէ ապերաստանութիւն, այլ ճշմարիտ և մարդուս արժանի ազատութիւն է, ամենն ևս յեկեղեցւոյ օրհնեալ է, և Քահանայապետաց քաղաքական իշխանութենէն կրնայ մեծ օգուտ քաղել: Եւ Քահանայապետք, երբ նորէն զայն ձեռք բերեն, ժամանակին պահանջումները և ընկերութեան նոր պէտքերը 'ի նկատի առնելով, զանց պիտի չընեն այն ամեն բարեփոխութիւններով ճոխացնել զայն, զոր կրնայ տանիլ: Նոյն իսկ իրենց հայրական խնամքն, որով միշտ իրենց հպատակաց նկատ-

մամբ տողորեալ էին, նաեւ 'ի ներկայիս հասարակաց տուրքերը թեթեւցնելու, եղբայրասիրական գործերուն և բարերարական հաստատութիւններուն մեծ առատաձեռնութեամբ նպաստելու, կարօտներու և գործաւորաց դասուն մասնաւոր հոգ տանելու, անոնց վիճակը բարւոքելով, մէկ խօսքով, իրենց քաղաքական իշխանութիւնը այժմ ևս հպատակաց բարեկեցութիւնը հայթայթելու յարմար հաստատութիւններէն մին ընելու պիտի յորդորէր զանոնք:

Եւ զայն իբրեւ միջին դարու ծնունդ ամբաստանելն ևս ոչինչ կ'արժէ:—Վասն զի այն, ինչպէս ըսինք, նոր ժամանակաց պահանջած պիտանի և օգտակար բարեփոխութիւնները պիտի ունենայ. և, թէ և իւր բնութիւնն նոյն պիտի ըլլայ՝ ինչ որ էր 'ի միջին դարու, այսինքն Հռովմայ Քահանայապետաց, 'ի գործադրութեան իրենց ծայրագոյն իշխանութեան, իրենց ազատութիւնը և անկախութիւնը ապահովելու համար սահմանեալ տէրութիւն մը. բայց զի՞նչ այտի: Ամենակարեւոր վախճանն, որում կը ծառայէ, բաղմաթիւ շահերն, որոնք կաթողիկէ աշխարհի խաղաղութեան և Տէրութեանց անդորրութեան համար անտի կը ծնանին, քաղցր կերպն, որով կը կառավարէ, ազդու մղումն, զոր գիտութեանց և քաղաքակրթական մշակութեանց ամեն տեսակին տուած է միշտ, այնպիսի տարրներ են՝ որոնք ամեն ժամանակի, քաղաքակրթեալ և խաղաղ, կամ թէ բարբարոս և աղմկալից ըլլան, սքանչելապէս կը պատշաճին: Զայն՝ միջին դարու մէջ ծաղկած ըլլալուն համար միայն ջնջել ուզելն, յիմարութիւն կ'ըլլար:—Որ դարերն սակայն, եթէ, ինչպէս ամեն ժամանակներն, մոլութիւններ և պախարակելի սովորութիւններ ունեցան, այլ այնպիսի սեպհական յատկութիւններ ևս ունեցան, որ, զանոնք չճանչնալն ստուգիլ անիրաւութիւն կ'ըլլար: Եւ ամենէն աւելի զանոնք գնահատել գիտնալու պարտաւոր է Իտալիա, որ ապաքէն այդ դարուց ընթացից մէջ, գիտութեանց, մատենագրութեանց, արուեստից, զինուորական և նաւական ձեռնարկութեանց, վաճառականութեան և քաղաքական կարգաւորութեանց մասին այնչափ բարձրութեան և փա-



1803-87

ռաց հասաւ, որ չկրնար երբէք եղծանիլ կամ նսեմանալ:

Տէր կարգինալ, կ'ուզէինք որ, այս գաղափարներն, որ այսպիսի բարձր դիտողութիւններէ բղխած են, և որոնք ամեն օրինաւոր շահերը կը հոգան, ամենուն մտաց մէջ թափանցէին, և ոչ միայն ամենայն ուղղափառք, այլ և այն ամենքն, որ ճշմարիտ սիրով զիտալիս կը սիրեն, Մեր այս տեսութիւնները յայտնապէս ընդունէին, և անոնց նպաստէին: — Այսու ամենայնիւ, Քահանայապետութեան հետ ըլլալիք հաշտութեան գործը յառաջ վարելով, և անոր հիմնական պայմանները ցուցըցած ըլլալով, հետեւելիք դիպուածներն ինչ որ ալ ըլլան, Աստուծոյ և մարդկանց առջեւ Մեր մի պարտքը կատարած կը համարիմք:

Իսկ Ձեր նկատմամբ, ապահով եմք որ, Ձեր բոլոր իմաստուն աղօթեցութիւնը 'ի գործ պիտի դնէք՝ 'ի գործադրութեան խորհրդոց, զորս այս նամակիս մէջ Ձեզ յայտնած եմք: Եւ որպէս զի Ձեր աշխատութիւնն Եկեղեցւոյ մեծապէս օգտակար, և Սուրբ Աթոռոյ պատուաւոր ըլլայ, Երկնից լոյսերը և նպաստները առատապէս Ձեզ կը մաղթեմք: Յորոց 'ի հաւաստի, և 'ի գրաւական առանձին սիրոյ, 'ի բոլոր սրտէ Առաքելական օրհնութիւնը կը շնորհեմք Ձեզ:

Ի վատիկանէ, 'ի 15 Յունիսի 1887

ԼԵՒՈՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԺԴ.

4736

2013



THE

AMERICAN

LIBRARY

OF

CONGRESS

WASHINGTON